ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2001-2011



Գիրքը պատրաստվել և հրապարակվել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակներում ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ: Այստեղ արտահայտված տեսակետները հեղինակային են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ տեսակետները:

ԵՐԵՎԱՆ-2011

«Մենք հպարտ ենք մեր 10-ամյա ձեռքբերումներով»

Երբ 2001թ.-ին հիմնադրվում էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, տեղեկատվության ազատության գաղափարը դեռեւս անհայտ էր մեր հասարակությանը, սակայն հսկայական էր դրա անհրաժեշտությունը: Միեւնույն ժամանակ, Կենտրոնի հիմնադիրները վստահ էին, որ երկրում շատ խնդիրներ հնարավոր կլինի հաղթահարել՝ ապահովելով կառավարման համակարգի մատչելիությունը, տեղեկատվության ազատությունն ու թափանցիկությունը: Կենտրոնը հիմնադրվեց 2001թ. հուլիսի 1-ին:

Մեր 10 ամյա գործունեության պատմությունը նշանավորվում է նշանակալի ձեռքբերումներով.

1. Տեղեկատվության ազատության մասին առաջավոր օրենքի մշակում և ընդունում 2003թ.-ին, որը եղավ մեր առաջին հիմնական ու կարևոր քայլը տեղեկատվության ազատության ապահովման ճանապարհին:

2. Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոնի հիմնում և 2500 քաղաքացիական և հանրային ծառայողների վերապատրաստում տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառման վերաբերյալ, քաղաքացիական հասարակության 3750 անդամների ուսուցում տեղեկատվության ազատության իրավունքի օգտագործման վերաբերյալ:

3. Հանրային լայն քարոզարշավ հեռուստատեսությամբ, ռադիոյով, մամուլով, ինտերնետով, տեղեկատվության ազատության «Ոսկե բանալի և Ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպում:

4. Խորհրդատվություն հազարավոր քաղաքացիներին, լրագրողներին ու պաշտոնյաներին տեղեկատության ազատության պատշաճ կիրառման վերաբերյալ:

5. Տասնյակ գրքերի, 2 դատական ժողովածուի և ուսումնական ձեռնարկների հրապարակում բոլոր թիրախ խմբերի համար:

6. «Դու տեղյակ ես» հեռուստահաղորդաշարի ստեղծում և տասնյակ հաղորդումների հեռարձակում:

7. Տասնյակ դատական գործեր ընդդեմ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաների:

8. Արդիականացված պաշտոնական ինտերնետային կայքեր, էլեկտրոնային կառավարման մեխանիզմների հիմնում և արդիականացում:

9. Ակտիվ միջազգային համագործակցություն և Տեղեկատվության ազատության պաշտպանների միջազգային ցանցի հիմնադրում:

10. ԵՎ վերջապես, ԻԱԿ-ին հաջողվեց բացության և հրապարակայնության միջավայր ձևավորել, տեղեկատվության ազատության գաղափարը Հայաստանում դարձնել հանրաճանաչ:

Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ

Ինֆորմացիայի ազատության կենտրոն 2001-2011

Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2001թ.-ի հուլիսի 1-ին Երեւանում մի խումբ լրագրողների եւ իրավաբանների կողմից: ԻԱԿ-ի հիմնական նպատակներն են.

1. Նպաստել բաց եւ թափանցիկ կառավարման համակարգի ձեւավորմանը եւ քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:
2. Նպաստել տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենսդրության կիրառմանը:

> «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնական առաքելությունն է պաշտպանել քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը»:

ԻԱԿ-ի գործունեության ուղղություններն են.

Ուսուցումներ

ԻԱԿ-ը ՀՀ ողջ տարածքում ուսուցումների միջոցով օգնում է քաղաքացիներին, ՀԿ, ՁԼՄ և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև պետական պաշտոնյաներին զարգացնել իրենց գիտելիքը և հմտությունները տեղեկատվության ազատության ոլորտում: 2003-2011թ.թ. ընթացքում 6250 մարդ՝ այդ թվում 2500 պաշտոնյա, ստացել է գիտելիք և հմտություն տեղեկատվության ազատության օրենսդրության վերաբերյալ:

Իրավական խորհրդատվություն և դատական պաշտպանություն

2001-2011թթ. ընթացքում Կենտրոնն իրավական խորհրդատվություն և աջակցություն է տրամադրել 6300 անձի: 2006-2011թ.թ. ընթացքում ԻԱԿ-ը տեղեկատվության տրամադրումն ապօրինի մերժած պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ 28 դատական գործ է հարուցել՝ 75% դրական արդյունքով, ինչի շնորհիվ վերականգնվել է տեղեկատվություն ստանալու խախտված իրավունքը:

Հանրային քարոզարշավ

2001թ.-ից մինչ օրս Կենտրոնը հրապարակում է «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը, որը ՏԱ ոլորտի մասին միակ մասնագիտացված պարբերականն է Հայաստանում:

2003թ.-ից ի վեր՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, ԻԱԿ-ը ամեն տարի սեպտեմբերի 28-ին՝ տեղեկատվության ազատության միջազգային օրը, կազմակերպում է տեղեկատվության ազատության մրցանակաբաշխություն՝ գնահատելու համար հրապարակային և բաց աշխատանքը և քննադատելու փակ և գաղտնի աշխատաոճը:

Օրենսդրական բարեփոխումներ

Կենտրոնն ակտիվ դերակատարում է ունեցել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մշակման և ընդունման գործում: Ներկայումս ԻԱԿ-ը նախաձեռնել է ՏԱ օրենսդրության բարեփոխումների երկրորդ սերնդի մշակման և ընդունման գործընթացը:

Բարեփոխումներ էլեկտրոնային կառավարման ոլորտում

ԻԱԿ-ն իրականացնում է մի շարք ծրագրեր կառավարման համակարգում էլեկտրոնային կառավարման նոր մեխանիզմներ ներդնելու, կատարելագործելու և դրանց հրապարակայնության ապահովման նպատակով: 2011թ. ԻԱԿ-ի նախաձեռնությամբ և աջակցությամբ արդիականացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության և 10 մարզպետարանների պաշտոնական կայքերը: Ինչպես և 2009-2010թ.թ. ԻԱԿ-ն աջակցել է ՀՀ մարզպետարաններում ներդնելու էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Մալբերի համակարգը:

ՏԱ օրենսդրության կիրառման և կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ

ԻԱԿ-ն իրականացնում է ՏԱ մասին ՀՀ օրենսդրության կիրառման պրակտիկայի մշտական դիտարկում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում: Կենտրոնը տարեկան 1000-ից ավելի տեղեկություն ստանալու հարցումներ է ուղարկում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ այսպիսով լինելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ամենաակտիվ օգտագործող կազմակերպություններից մեկը: Անցած 10 տարիների ընթացքում ԻԱԿ-ը բազմաթիվ մոնիտորինգներ է իրականացրել՝ պարզելու տեղեկատվության ազատության վիճակը ՀՀ-ում:

ՏԱ ամենամյա մրցանակաբաշխություն 2009թ.
ՀՀ վարչապետ Տ. Սարգսյան և ԻԱԿ նախագահ Շ. Դոյդոյան

Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան
Մարի Յովանովիչի այցը ԻԱԿ գրասենյակ, մարտ 2010թ.

Դոկտոր Զաթինդեր Չիմա
ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի առաքելության տնօրեն

-ԱՄՆ Միջազգային զարգացման գրասենյակի համար պատիվ է 2005թ.-ից աջակցել Ինֆորմացիայի ազատության կենտրոնին՝ իր նպատակալաց աշխատանքում: Վերջին տարիներին Հայաստանը նշանակալի առաջընթաց է գրանցել իր քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքն ապահովվելու գործում: ԻԱԿ-ի նախաձեռնողական ջանքերի շնորհիվ 2003թ.-ին Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի ընդունումը հնարավորություն ընձեռեց ՀՀ քաղաքացիներին և քաղաքացիական հասարակությանը, որպեսզի պետական մարմինները հաշվետու և պատասխանատու լինեն քաղաքացիների և կազմակերպությունների տեղեկատվության հարցումների հարցում:

Տաս տարվա ակտիվ աշխատանքի ընթացքում ԻԱԿ-ը նպաստել է կառավարման գործընթացին հասարակական և քաղաքացիական ներգրավվածությանն ու մասնակցությանը, ինչպես նաև, տեղեկատվության հասանելիությունը հեշտացնելով՝ նպաստել է թափանցիկ և հաշվետու կառավարմանը: Կենտրոնը շարունակաբար բարձրացրել է հանրային իրազեկվածությունը ՏԱ օրենքով սահմանված քաղաքացիների իրավունքների մասին, պաշտոնյաներին տեղեկացրել է օրենքի սահմաններում իրենց պարտականությունների մասին և իրականացրել օրենսդրական դաշտի վերաբերյալ ուսուցողական միջոցառումներ, որն անչափ անհրաժեշտ էր հաշվետու կառավարություն ստեղծելու համար: Քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքը վաղուց եղել է հայկական ժողովրդավարության անկյունաքարերից մեկը, և ԱՄՆ-ը հպարտ է, որ առաջատար դեր ունի այս իրավունքի ապահովման գործում: Մեկ ու կես դար առաջ նախագահ Աբրահամ Լինկոլնն ընդգծեց այսօրվա տեղեկատվության ազատության կարևորությունը, երբ ասաց, «Ես միանգամայն հավատում եմ ժողովրդին: Եթե ճիշտն ասենք, ցանկացած ազգային ճգնաժամ հաղթահարելու համար կարելի է հույսը ժողովրդի վրա դնել: Կարևորն այն է, որ նրանց իրական փաստերի մասին տեղեկացնենք»: Այսօր նախագահ Օբամայի առաջին հրամանը նախագահ դառնալուց հետո վերաբերում էր հանրային տեղեկատվության հասանելիությանը՝ հատկապես նախագահական արխիվներին: Նա նշեց, որ «Կառավարությունը չպետք է տեղեկատվությունը գաղտնի պահի, պարզապես որովհետև հանրային պաշտոնյաները կարող են ամաչել դրանց հրապարակումից, սխալներն ու ձախողումները կարող են բացահայտվել, կամ տեսական և աբստրակտ վախից ելնելով»: Կառավարական տեղեկատվության հասանելիության բարելավումը երբեք չավարտվող գործընթաց է, քանզի աշխարհի պետությունները կարող են շարունակել բարելավել և ամրապնդել տեղեկատվության ազատության ներկայիս փորձը:

Հայկական ժողովրդավարությունը դեռ երիտասարդ է, և չնայած այն առաջընթացներ է գրանցել բաց, թափանցիկ և հաշվետու աշխատանքում՝ շատ բան դեռ մնում է անավարտ: Վերջին տասը տարիների ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը կարևոր դերակատարություն է ունեցել այս գործընթացում, և ԱՄՆ Կառավարության անունից ես շնորհավորում եմ ձեզ այսօրվա ձեր նվաճումների համար: Մենք հուսով ենք, որ ԻԱԿ-ը կկարողանա շարունակել ցուցադրել նման նպատակասլացություն և ջանասիրություն՝ հանուն նոր և կայուն ձեռքբերումների, և մենք ձեզ ամենայն հաջողություն ենք մաղթում՝ ձեր հետագա աշխատանքներում:

Մանվել Բաղալյան
ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահ

-Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկատվության մատչելիության ապահովման միասնական մեխանիզմների և սկզբունքների հստակեցման իմաստով բեկումնային նշանակություն ունեցավ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Սակայն օրենքի նշանակությունն էապես մեծացավ հատկապես այն պատճառով, որ դրա կիրառման համար պայքարն սկսվեց ներքևից՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից, որոնց թվում «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» իր տասնամյա գոյության ու գործունեության ընթացքում իսկապես իր ուրույն տեղն ու ձեռագիրն է ստեղծել, որը հիմնված է օրենքի իրավակիրառական պրակտիկան ձևավորելու և հատկապես պատկան մարմինների, պետական ու հանրային պաշտոնյաների և ծառայողների մոտ տեղեկատվության ազատության և մատչելիության ապահովման գիտակցությունն ամրապնդելու վրա:

Քաղաքացիական ծառայության խորհրդի և Կենտրոնի՝ արդեն մի քանի տարվա պատմություն ունեցող համագործակցությունը ևս ուղղված է եղել դրան: Այն պետական մարմնի և հասարակական կազմակերպության միջև նպատակային և արդյունավետ գործակցության դասական օրինակ է, որի արդյունքում իրականացրել ենք վերապատրաստման մի քանի ծրագրեր, բարելավել ու հարստացրել պետական մարմինների աշխատակազմերում տեղեկատվության ստեղծման և տրամադրման համար պատասխանատու քաղաքացիական ծառայության պաշտոնների զբաղեցման մրցույթների և քաղծառայողների ատեստավորման հարցաշարերը, փոփոխություններ կատարել համապատասխան պաշտոնների անձնագրերում: Այդ ամենի նպատակը եղել է տեղեկատվության ազատության օրենքի իմացությունը քաղաքացիական ծառայության ոլորտում պարտադիր դարձնելը:

Մենք համոզված ենք, որ պատասխանատու, հաշվետու և թափանցիկ պետական և համայնքային կառավարում կարելի է ունենալ նաև քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը իրացնելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններն ստեղծելու միջոցով: Դա է պետական կառավարման նկատմամբ հանրային վերահսկողության իրականացման ամենաարդյունավետ ճանապարհը:

Այս իմաստով դեռևս լուրջ անելիքներ կան: Համոզված ենք, որ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը», արդեն հիմնվելով իր տասնամյա աշխատանքի արդյունքների ու կուտակած փորձի վրա, կրկնապատկված եռանդով ու վստահությամբ կշարունակի իր գործունեությունը: Եվ իր այդ առաքելության մեջ մեր գործընկերներին մաղթում ենք նորանոր ձեռքբերումներ:

1. Ուսուցումներ

> 2003-2011թ.թ.-ի ընթացքում 6250 մարդ՝ այդ թվում 2500 պաշտոնյա, ստացել է գիտելիք և հմտություն տեղեկատվության ազատության օրենսդրության վերաբերյալ:

ՏԱ կրթական կենտրոնի առաջին շրջանավարտ քաղծառայողները

2001-2011թ.թ.-ի ընթացքում ԻԱԿ-ը ՀՀ ողջ տարածքում տեղեկատվության ազատության վերաբերյալ տասնյակ դասընթացներ է կազմակերպել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղ. հասարակության ներկայացուցիչների համար: Միայն 2008-2010թ.թ. ընթացքում ԻԱԿ-ն անցկացրել է 40 ուսուցում ՀՀ 10 մարզերում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման և օգտագործման վերաբերյալ:

Որպես ուսուցումների անցկացման ինստիտուցիոնալ հիմք՝ 2010թ.-ի նոյեմբերին ԻԱԿ-ը հիմնադրեց «Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոն»՝ դառնալով պետական պաշտոնյաներին ՏԱ ազատության վերաբերյալ գիտելիքով և հմտություններով ապահովող կայուն ինստիտուցիոնալ մեխանիզմ:

Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում

2008թ.-ից Կենտրոնը ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ սկսեց իրականացնել ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստում: Առաջին մեկնարկը եղավ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ իրականացված «Տեղեկատվության ազատության վերաբերյալ վերապատրաստման դասընթաց հասարակայնության հետ կապերի պատասխանատու քաղաքացիական ծառայողների համար» ծրագիրը, որի շրջանակներում պետական կառավարման մարմինների հասարակայնության հետ կապերի 84 պատասխանատուներ 2-օրյա ուսուցումների արդյունքում ձեռք բերեցին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման համար անհրաժեշտ գործնական գիտելիք և հմտություններ:

Այս համագործակցության հաջորդ արդյունքը եղավ այն, որ ՀՀ քաղծառայության համակարգի մարմինների հասարակայնության հետ կապերի պատասխանատուների պաշտոնի անձնագրերը լրամշակվեցին՝ այդուհետ ներառելով նաև կոնկրետ գործառույթներ ու պարտականություններ ՏԱ ոլորտում:

«Տեղեկատվության ազատության ոչ ֆորմալ կրթական կենտրոն»-ում 2010թ. նոյեմբերից հունիս վերապատրաստվել է 301 քաղաքացիական ծառայող: Եռօրյա դասընթացների ավարտին բոլոր մասնակիցներին տրվել են պետական նմուշի վկայականներ:

Ուսումնական կենտրոնում դասընթացներն իրականացվում են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2010թ. հոկտեմբերի 28-ի N847 որոշմամբ հաստատված «Ամբողջականության հիմունքները և տեղեկատվության ազատությունը և հասարակայնության հետ կապերի ապահովումը կառավարման համակարգում» ծրագրով:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը 2008թ. ապրիլի 17-ի N 302-Ա որոշմամբ «Տեղեկատվության ազատությունը եւ հասարակայնության հետ կապերի ապահովումը կառավարման համակարգում» վերապատրաստման դասընթացն ընդգրկեց հասարակայնության հետ կապերի պատասխանատու քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացների ծրագրում:

Իսկ ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ.-ի հոկտեմբերի 20-ի N129-Ա հրամանով հաստատվեց համայնքային ծառայողների համար նախատեսված «Միջանձնային հարաբերությունները, տեղեկատվության ազատությունը եւ հասարակության հետ կապերի ապահովումը տեղական ինքնակառավարման համակարգում» վերապատրաստման ծրագիրը:

Վաչե Տերտերյան
ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր տասնամյա գործունեության ընթացքում նշանակալի ներդրում է ունեցել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ու հրապարակայնության բարձրացման գործում, որին նպաստել են նաև կենտրոնի ամենամյա մրցանակաբաշխությունները:

Ողջունելի է ԻԱԿ-ի հետևողականությունը՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենսդրության կիրառման և քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության հարցում, ինչը ժողովրդավարության ամրապնդման ճանապարհին կարևոր քայլ է:

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը կարևորում է Կենտրոնի հետ համագործակցությունը: Բարձր ենք գնահատում նաև ԻԱԿ-ի աշխատանքը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: ԻԱԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության մատչելիությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում ներկայումս արդիականացվում են մարզպետարանների տեղեկատվական կայքերը, որոնցում բացի մարզերի և մարզպետարանների գործունեության վերաբերյալ համապարփակ տեղեկատվությունից, հնարավոր է ծանոթանալ տեղեկատվության ազատության օրենսդրությանը և առցանց հետևել հարցումների ընթացքին:

ՏԿՆ-ն շնորհավորում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնին՝ մաղթելով հաջողություններ և հետագա արդյունավետ գործունեություն:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի գործունեության 10 տարիների արժանիորեն մաս են կազմում առանցքային կարևորություն ունեցող և բազում նշանակալի իրողություններ ամբողջացնող այնպիսի գործընթացներ, որոնց հիմքում ակնհայտորեն նկատվում են ժողովրդավարության ցանկալի դրսևորումներն ու վերջիններիս անընդհատ կատարելագործման միտումները:

Իրավամբ կարելի է փաստել, որ Կենտրոնն իր բացառիկ առաքելությամբ նպաստեց ժողովրդավարության կարևորագույն նախապայման համարվող տեղեկատվության ազատության մշակույթի ներդրմանն ու շահագրգիռ մասնակցություն ունեցավ այդ մշակույթի պահպանման ու տարածման ասպարեզում:

Ջերմորեն շնորհավորելով Կենտրոնի հիմնադրման 10-ամյա հոբելյանը՝ անհրաժեշտ եմ համարում ընդգծել նաև կազմակերպության նախագահ Շուշան Դոյդոյանի կատարած հսկայածավալ աշխատանքը և փաստել այդ աշխատանքի արդյունավետությունն ու առանձնահատկությունները:

Կավալենկո Շահգալդյան
ՀՀ Կոտայքի մարզպետ

2. Տեղեկությունների հրապարակման մեխանիզմների բարելավում

Տեղեկատվական ցուցատախտակներ

Տեղեկատվության ազատության ոլորտում ամենակարևորն այն է, որ պետական մարմինները իրենց սեփական նախաձեռնությամբ հրապարակեն հանրության համար կարևոր տեղեկություններ: Այս նպատակով ԻԱԿ-ը համայնքներին՝ գյուղական և քաղաքային, տրամադրում է տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինները պետք է հրապարակեն իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկատվությունը:

ԻԱԿ-ի և համայնքների ղեկավարների միջև կնքվել է հուշագիր, որով համայնքի ղեկավարները պարտավորվել են պարբերաբար (առնվազն ամիսը մեկ անգամ) թարմացնել ցուցատախտակներում հրապարակվող տեղեկատվությունը, ցուցատախտակներն օգտագործումը բացառապես հանրային նպատակներով, այսինքն, պետք է իսպառ բացառվի գովազդի տեղադրումը դրանց վրա:

> 2007թ. մինչ օրս ԻԱԿ-ը ՀՀ 49 համայնքներում տեղադրել է 230 տեղեկատվական ցուցատախտակ:

Էլեկտրոնային կառավարման մեխանիզմների բարելավում

ԻԱԿ-ի նախաձեռնությամբ և աջակցությամբ 2011թ.-ին լիովին արդիականացվեցին ՀՀ Տարածքային կառավարման նախարարության և 10 մարզպետարանների պաշտոնական ինտերնետային կայքերը: 2011թ. կենտրոնը ստեղծեց վեբ պորտալների ցանց, որով հանրությանը տրամադրվում են համապարփակ և լիարժեք տեղեկատվություն մարզպետարանների և տարածքային կառավարման նախարարության գործունեության վերաբերյալ, ինչպես նաև ապահովում է այս մարմիններում առկա հանրության համար կարևոր և անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունն ու բացությունը (համայնքային բյուջեներ և դրանց կատարման հաշվետվություններ, ֆինանսական հատկացումներ, մարզպետերի որոշումներ, ինչպես նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված 13 խումբ տեղեկությունները):

Որպես էլեկտրոնային կառավարման մեխանիզմների բարելավման մեկ այլ ուղղություն, ԻԱԿ-ը նաև աջակցում է ՀՀ կառավարությանը կառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Մալբերի» համակարգը արդյունավետ գործարկելու հարցում: Այս նպատակով 2010-2011թ.թ. -ին անցկացվել է ուսուցումների և աշխատանքային քննարկումների շարք ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի ղեկավարների և հասարակայնության հետ կապերի վարչությունների և բաժինների աշխատակիցների համար, համակարգիչներ տրամադրվել մարզպետարանների տեղեկատվական կենտրոններին:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության կայքի շնորհանդես. մայիս 2011: Ներկայացնում է Հելիքս ընկերության ղեկավար Արամ Մխիթարյանը

Աղվան Հովսեփյան
ՀՀ գլխավոր դատախազ, Արդարադատության պետական խորհրդական

-Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 10-ամյա գործունեության կապակցությամբ շնորհավորում եմ Շուշան Դոյդոյանին և կազմակերպության ողջ անձնակազմին: Քաղաքացիական հասարակության կայացումը այսօր մեր պետականության և հասարակության կարևոր ձեռքբերումներից ու մնայուն արժեքներից է, և Դուք այդ ասպարեզում ունեք Ձեր ծանրակշիռ ներդրումը:

ԻԱԿ-ն առանձնացել է նաև իրավապահ մարմինների հետ սերտ համագործակցությամբ: Խորապես գնահատում ենք Ձեր անկեղծ շահագրգռվածությունը իրավապահ համակարգի, հատկապես դատախազության և հասարակության միջև տեղեկատվական փոխհարաբերությունների, տեղեկատվության տրամադրման մատչելիության կառուցակարգերի ստեղծման ու զարգացման ուղղությամբ Ձեր կազմակերպության ներդրած ավանդները:

Ձեզ և Ձեր աշխատակազմին ցանկանում եմ քաջառողջություն, կամք, ուժ և կորով վճռականությամբ և եռանդով կատարելու քաղաքացու, քաղաքացիական հասարակության ներկայացուցչի բարդ, պատասխանատու, պետականության և հասարակության հանդեպ նվիրվածություն պահանջող աշխատանքը: Առանց ազատ, կայացած, ինքնակազմակերպված քաղաքացիական հասարակության՝ մեր հասարակությունը լիարժեք լինել չի կարող:
Հաջողություն Ձեզ:

Ռուզան Մինասյան
«Առավոտ» օրաթերթի իրավական էջի պատասխանատու

-Շնորհավորում եմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» իմ գործընկերներին՝ հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ: ԻԱԿ-ը տեսանելի հասարակական կազմակերպություններից մեկն է: Քչերից մեկը, ում գործունեությանն առնչվում ես ամեն վայրկյան, ում գործնական առաջարկներից օգտվում ես առանց «թարգմանչի» օգնության:

ԻԱԿ-ը յուրաքանչյուրի կողքին է, զբաղվում է իրական, գործուն լրագրությամբ: ԻԱԿ-ն ավանդույթներ ձևավորող կազմակերպություն է, որի նախաձեռնությամբ կյանքի կոչվեց ՏԱ օրենքով խոսքի ազատությանը խոչընդոտող արգելքները հաղթահարվեցին, տեղեկատվությունը դարձավ մատչելի: ՁԼՄ նախորդ օրենքով նախատեսված էր, որ յուրաքանչյուրն իրավունք ունի տեղեկություններ ստանալ պաշտոնատար անձանցից, սակայն կարգավորված չեր՝ ինչպես: Եվ չինովնիկներն օգտվելով ՁԼՄ օրենքի այդ բացթողումից տեղեկատվության մատչելիության առումով փակ էին: ՏԱ օրենքով կարգավորվեց այդ հարցը: ԻԱԿ-ն անգամ դատարաններ դիմեց, կազմակերպությունը դատարաններում լրագրողներին մենակ չթողեց: Դժվար է լինել տեսանելի և քննադատության թիրախ չդառնալ: Սակայն մի բան ակնհայտ է. ԻԱԿ-ը զբաղված է մեն մի ոլորտով. տեղեկատվության մատչելիության, որի համար հսկայածավալ աշխատանքներ է կատարել:
Շնորհավորում եմ:

3. Ռազմավարական դատական գործեր

Ռազմավարական դատական գործերի ստեղծումը ԻԱԿ-ի հիմնական գործիքներից է՝ որպես տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության կարևորագույն երաշխիք: Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական գործեր այն պաշտոնյաների դեմ, ովքեր խախտում են քաղաքացիների տեղեկատվություն ստանալու իրավունքը, անպատասխան են թողնում ՏԱ հարցումները կամ տրամադրում են ոչ ամբողջական կամ թերի տեղեկատվություն: Այս գործընթացի շնորհիվ աստիճանաբար ձևավորվում է տեղեկատվության ազատության վերաբերյալ դատական նախադեպային պրակտիկա:

Կենտրոնի նախաձեռնած դատական գործերից մի քանիսն ունեցել են նախադեպային նշանակություն: Այդպիսի գործ էր ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետարանի դատական գործը, երբ առաջին անգամ տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյան՝ Ելփինի գյուղապետը, ենթարկվեց վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 50.000 դրամի չափով:

Նախադեպային էր նաև Ինֆորմացիայի ազատության կենտրոնի դիմումը ՀՀ Սահմանադրական դատարան: 2010թ.-ի փետրվարի 5-ին ՀՀ Սահմանադրական դատարանում քննվեց ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 151 և 152 հոդվածները ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ ԻԱԿ-ի դիմումը: Սահմանադրական դատարանը որոշեց, որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 151 և 152 հոդվածները Սահմանադրությանը չեն հակասում: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը արձանագրեց, որ խնդիրը կայանում է այս ոլորտում օրենսդրական բացի մեջ: Անհրաժեշտ է, որպեսզի իրավասու մարմինը՝ ՀՀ Ազգային ժողովը, համապատասխան նախաձեռնություն իրականացնի՝ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բարեփոխումներ կատարելու և վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի օրենսդրական բացը լրացնելու համար:

> 2003թ.-ից մինչ օրս Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ հարուցվել է 28 դատական գործ՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի ոտնահարման վերաբերյալ: 2011թ. նոյեմբերի 1-ի դրությամբ 26-ն ամբողջությամբ ավարտվել է, 2 գործ դեռեւս ընթացքի մեջ է՝ ԻԱԿ-ն ընդդեմ Զարթոնքի գյուղապետարանի և ԻԱԿ-ն ընդդեմ «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի:

Կենտրոնի այս նախաձեռնությունն անհետևանք չմնաց. 2011թ.-ի հունվարի 31-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենք, որով հստակեցվեց նաև մարդկանց՝ տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը: Փոփոխությունների համաձայն՝ ՏԱ իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու համար այլևս վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն անհրաժեշտ չէ:

ՀՀ Սահմանադրական դատարանում քննվում է ԻԱԿ-ի դիմումը. փետրվար, 2010թ:

4. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք. 2003-2011թ.թ.

“ՏԱ մասին” օրենքի բարեփոխումների փաթեթի ներկայացում, նոյեմբեր, 2009թ.

2003թ.-ի սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովն ընդունեց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որը միջազգային հանրության և ոլորտի մասնագետների կողմից ճանաչվեց որպես աշխարհում լավագույններից մեկը: Սա բացառիկ դեպք էր, երբ քաղաքացիական հասարակությունը կարողացավ ակտիվորեն և արդյունավետորեն համագործակցել կառավարության և Ազգային Ժողովի հետ՝ մշակելով առաջադեմ օրենսդրական ակտ: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը համախմբելով մի խումբ լրագրողների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և պատգամավորներ Վիկտոր Դալլաքյանին և Վարդան Բոստանջյանին, ստեղծեց աշխատանքային խումբ, որի շուրջ 2 տարի տևած աշխատանքի շնորհիվ մշակվեց և խորհրդարանին ներկայացվեց «Տեղեկատվության ազատության մասին» գործող օրենքը:

2009թ. ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ «Տեղեկատվության ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության, Ազգային Ժողովի և Արդարադատության նախարարության կողմից՝ քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ մշակվեց Հայաստանի «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի և առնչվող օրենքների փոփոխությունների փաթեթի նախագիծը, որը 2009թ. դեկտեմբերից ներառվել է ՀՀ ԱԺ քառօրյա օրակարգ, սակայն 2011թ. նոյեմբերի 1-ի դրությամբ դեռ չի քննարկվել:

Մինչ նշյալ նախագծի մշակումը մի շարք կլոր սեղան և քննարկումներ է կազմակերպել ԻԱԿ-ը՝ փաթեթի նախագծի վերաբերյալ շահառու խմբերի՝ ներառյալ քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և պետական հաստատությունների ներկայացուցիչների առաջարկներն ու եզրակացությունները լսելու համար, որոնք ևս ներառված են նախագծում:

“Մարդու իրավունքների EXPO-2011”, 10 դեկտեմբերի, 2011թ.
ձախից՝ ԻԱԿ-ը ներկայացնում է “Խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքի” տաղավարը, աջից՝ ԻԱԿ նախագահ Շ. Դոյդոյանը և ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կ. Անդրեասյանը:

Արմեն Աշոտյան
ՀՀ կրթության և գիտության նախարար

-Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքները «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության գործունեության տասնամյա հոբելյանի կապակցությամբ:

21-րդ դարը, լինելով տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակաշրջան, առաջ է քաշել տեղեկատվական հասարակության ձևավորման պահանջ, որի կայացմամբ է պայմանավորված նաև յուրաքանչյուր պետության և հասարակության ժողովրդավարության աստիճանը: Տեղեկություն ստանալու իրավունքի ապահովումը ժամանակակից աշխարհում դարձել է ոչ միայն անձի սոցիալականացման գրավականը, այլև մարդու հիմնարար ազատությունների կարևոր մասը:

Հավատարիմ մնալով ժողովրդավարական արժեքների արմատավորմանը՝ միտված մեր երկրի որդեգրած սկզբունքներին, Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր տասնամյա կենսագրությամբ նպաստել է ինչպես պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հանրային նշանակության կազմակերպությունների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը, այնպես էլ դրանց նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորմանը: Կենտրոնի «Ոսկե բանալի» մրցանակաբաշխությունը դարձել է տեղեկատվության ազատության հանրային գնահատականի յուրօրինակ միջոց:

Կրկին շնորհավորելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ողջ անձնակազմին տասնամյա հոբելյանի կապակցությամբ, մաղթում եմ նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ:

Կարեն Անդրեասյան
Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպան

-Տեղեկատվության ազատության կենտրոնը և նրա հիմնադիր-նախագահ Շուշան Դոյդոյանը հայաստանյան քաղաքացիական հասարակության ամենավառ ներկայացուցիչներից և Մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների ամենաօրինակելի պաշտպաններից են:

Տեղեկատվության ազատության մասին օրենքը, որը հեղինակել ենք Շուշան Դոյդոյանի և մեր այլ գործընկերների հետ համատեղ, դարձավ այն կարուոր հիմքը, որի վրա մինչ օրս գործում ու զարգանում է Տեղեկատվության ազատության կենտրոնը: Կենտրոնն իր հերթին հիմնարար կարուորություն ունի մեր երկրում թափանցիկ կառավարման ու տեղեկատվության մատչելիության, հետևաբար նաև ժողովրդավարության կայացման համար: Բազմաթիվ են մեր երկրում մարդիկ, ում օգնել է տեղեկատվության ազատության կենտրոնը ու շատ են նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, որոնց Կենտրոնն իրավաչափ անհանգստություն է պատճառել: Մարդկանց օգնելու և մարդկանց համար պետական մարմինների դռներն ու տեղեկությունները բացելու իր անվիճելի կարողությամբ՝ Կենտրոնը, վստահաբար, դեռ շատ տասնամյակներ կշարունակի իր մեծ առաքելությունը:

5. Հանրային քարոզարշավ

Տեղեկատվության ազատության շաբաթը Հայաստանում 2011թ. սեպտեմբերի 22-28

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի գործունեության 10 ամյակի առիթով 2011թ. սեպտեմբերի 21-28-ը կենտրոնն առաջին անգամ անցկացրեց Տեղեկատվության ազատության շաբաթ՝ տեղեկատվության ազատության գաղափարը հանրաճանաչ դարձնելու նպատակով:

- 21 սեպտեմբերի, 2011- ՀՀ անկախության 20-ամյակին և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադրման 10-ամյակին նվիրված հանրային քարոզարշավ. ԻԱԿ-ի աշխատակիցները և ԵՊՀ ուսանողները հատուկ համազգեստներով շրջեցին Երևանի փողոցներով և մարդկանց բաժանեցին ՏԱ իրավունքին առընչվող տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ, փուչիկներ:

- 22 սեպտեմբերի, 2011- Տեղի ունեցավ տեղեկատվության ազատության ոլորտի վիճակագրական ամբողջական պատկերը ներկայացնող նոր վեբ-նախագծի՝ www.givemeinfo.am, մեկնարկ-շնորհանդեսը, ներկայացվեցին «Տեղեկատվության ազատությունը Հայաստանում» լայնածավալ մոնիտորինգի արդյունքները:

- 26 սեպտեմբերի, 2011- Կոտայքի մարզպետարանում տեղի ունեցավ ԻԱԿ-ի կողմից արդիականացված ՀՀ տասը մարզպետարանների պաշտոնական վեբ կայքերի շնորհանդեսը:

- 28 սեպտեմբերի, 2011- Տեղեկատվության ազատության շաբաթը եզրափակվեց «Ոսկե բանալի, ժանգոտ կողպեք» ՏԱ ամենամյա մրցանակաբաշխությամբ: Այս տարի ավանդական դարձած անվանակարգերից բացի, ԻԱԿ-ի հիմնադրման տասնամյակի կապակցությամբ 10 հատուկ մրցանակներ շնորհվեցին նաև անցած տասը տարիներին ՀՀ-ում տեղեկատվության ազատության ոլորտի հաստատմանը և զարգացմանն ուղղված լավագույն նախաձեռնությունների հեղինակ մարմիններին և կազմակերպություններին:

«Աշխարհի ավելի քան 100 երկրներում, որտեղ ընդունվել և գործում են ՏԱ մասին օրենքներ, ամեն տարի սեպտեմբերի վերջին շաբաթը նվիրում են տեղեկատվության ազատությանը»:

Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխություն

„2002թ.-ից աշխարհի 100-ից ավելի երկիր սեպտեմբերի 28-ը նշում է որպես Տեղեկատվության ազատության միջազգային օր»:

ՏԱ ամենամյա մրցանակաբաշխություն 2009թ.

2003թ.-ից ի վեր ՏԱ մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո Ինֆորմացիայի ազատության կենտրոնն այս օրը նշանավորելու համար անցկացնում է մրցանակաբաշխություն՝ գնահատելու հրապարակային և բաց աշխատանքը և քննադատելու փակ և գաղտնի աշխատառճը:

Դրական անվանակարգերն են.

- Ամենաբաց գերատեսչություն, որը լավագույնս է կիրառում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը:
- Տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք:
- Տեղեկատվության ազատության ապահովմանն ուղղված լավագույն պաշտոնական նախաձեռնություն:
- Տեղեկություն ստանալու իրավունքն ամենաակտիվ և լավագույնս օգտագործած հասարակական կազմակերպություն:
- Տեղեկատվության ազատությանն առնչվող խնդիրները հետևողական լուսաբանած և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքն ամենաակտիվ օգտագործող լրագրող/լրատվամիջոց:
- Տեղեկություն ստանալու իրավունքն ամենաակտիվ օգտագործած քաղաքացի:

Բացասական անվանակարգերն են.

- Հայաստանի Հանրապետության ամենափակ գերատեսչություն, որն ամենավատն է կատարում «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջները:
- Ամենազավեշտալի պաշտոնական պատասխանի հեղինակ-գերատեսչություն:

Մրցանակակիրներին որոշում է տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից, լրագրողներից, ոլորտի փորձագետներից կազմված ժյուրին: Ժյուրիի անդամներն ամփոփում են իրենց և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մոնիտորինգների արդյունքները, քննարկում են նաև կենտրոնի եռամսյակային Սև ցուցակները, որում ընդգրկվում են տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյաներն ու գերատեսչությունները:

ՏԱ մրցանակաբաշխություն 2009թ.-ի հաղթողները

Բաց և հրապարակային մարմին ընտրվում է հետևյալ չափանիշներով՝ որքանով լավ և արդյունավետ է կիրառվում այս կառույցի կողմից տեղեկատվության ազատության մասին դրույթները, որքանով ժամանակին և պատշաճ ձևով են ընթացք տրվում քաղաքացիների տեղեկատվություն ստանալու հարցումներին, արդյոք մերժումները հիմնավորված և պատճառաբանված են, արդյոք տվյալ կառույցի կողմից սեփական նախաձեռնությամբ հրապարակվում են իրենց մոտ առկա տեղեկությունները, որքանով դրանք ժամանակին թարմացվում են; Այսպիսի բազմաթիվ չափորոշիչների միջոցով անկախ փորձագետներից կազմված ժյուրին կատարում է իր ընտրությունը: Մրցանակակիրների ընտրման չափորոշիչներն ամբողջությամբ հրապարակված են ԻԱԿ-ի պաշտոնական կայքում՝ http://www.foi.am/hy/award-standards/:

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանին հանձնվում է Ոսկե բանալի մրցանակը www.e-gov.am կայքի համար՝ որպես տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային կայք, սեպտեմբեր 2010թ.

Տեղեկատվության ազատությանը նվիրված առաջին երգը

Տեղեկատվության ազատությունն ունի արդեն իր սեփական երգը, որի հեղինակն է VOX խմբի ղեկավար Արամ Ռյանը:

http://www.youtube.com/watch`v=cJWYv_9XVos

Give Me Info

Ես ուզում եմ, որ երբեք ինձ չխաբես,
Որքան էլ դառը՝ միշտ ճշմարտությունն ասես:
Կան խնդիրներ, որոնք պիտի միասին լուծենք.
Թե քողարկես, միասնաբար կկործանվենք:

Պայքարում եմ, պահանջում եմ՝
Give me info -
Տեղեկություն ինձ տու՝ր
Give me info -
Թափանցիկ, մաքուր:

Ես երազելեմ, որ ապրեմ արդար երկրում:
Բայց որտեղ սուտ կա, չի լինում արդարություն:
Ես մարդ եմ բանական, պիտի ազատ լինեմ:
Ինչպես ազատ լինել, տեղեկություն չունեմ:

Պայքարում եմ, պահանջում եմ՝
Give me info -
Տեղեկություն ինձ տու՝ր
Give me info -
Թափանցիկ, մաքուր:
Փրկենք ճշմարտությունը ստի կապանքից:
Տեղեկությունն է լույսը, որ կիշխի նորից:
Տեղեկությունն է ուժն ու զորությունը մեր՝
Միասին կարող ենք կյանքը մեր երկրում փոխել:

Պայքարում եմ, պահանջում եմ՝
Give me info -
Տեղեկություն ինձ տու՝ր
Give me info -
Թափանցիկ, մաքուր:

Սև ցուցակ

2001թ. ի վեր Ինֆորմացիայի ազատության կենտրոնը յուրաքանչյուր եռամսյակ հրապարակում է տվյալ ժամանակահատվածում մարդկանց տեղեկատվություն ստանալու իրավունքը խախտած գերատեսչությունների ղեկավար պաշտոնատար անձանց Սև ցուցակ:

Սև ցուցակում հայտնվում են այն պետական կառավարման մարմինների, ՏԻՄ-երի կամ հանրային նշանակության կազմակերպությունների ղեկավարները, ովքեր.

- չեն պատասխանում տեղեկատվություն ստանալու հարցումներին,
- տեղեկատվություն ստանալու հարցումներին պատասխանում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետների խախտմամբ (չնայած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը ՏԱ գրավոր հարցումներին պատասխանելու համար սահմանում է 5 աշխատանքային օրյա ժամկետ, ԻԱԿ-ը հաշվարկում է լրացուցիչ 4 աշխատանքային օր՝ որպես փոստային առաքման ժամկետ: Ուստի, պատասխանը համարվում է ժամկետ խախտած, եթե այն չի ստացվել ՏԱ հարցումն ուղարկելուց 9 աշխատանքային օր հետո),
- անհիմն մերժում են տեղեկատվություն ստանալու հարցումները,
- թերի, ոչ լիարժեք, կամ կեղծ տեղեկատվություն են տրամադրում,
- տեղեկատվության տրամադրման համար անօրինական վճարներ են սահմանում և/կամ գանձում,
- տեղեկատվության տրամադրման ոչ պատշաճ աղբյուրների են հղում կատարում,
- պատշաճ կերպով չեն հրապարակում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Որևէ պաշտոնատար անձի և համապատասխան գերատեսչությանը Սև ցուցակում ներառելուց առաջ ԻԱԿ-ը ձեռնարկում է հետևյալ անհրաժեշտ քայլերը.

Քայլ 1.
Վերոնշյալ աշխատանքային 9-օրյա ժամկետը լրանալուց հետո ԻԱԿ-ի աշխատակիցը զանգահարում և ճշտում է՝ արդյոք տեղ է հասել հարցումը. ում վրա է մակագրված:

Քայլ 2.
Թերի, ոչ լիարժեք պատասխան կամ անհիմն մերժում ստանալուց կամ ընդհանրապես պատասխան չստանալուց հետո կենտրոնն ուղարկում է կրկնակի հարցում:

Քայլ 3.
Կրկնակի հարցումն անպատասխան թողնելու դեպքում տվյալ մարմինը և դրա ղեկավարը հայտնվում են Սև ցուցակում:

ԻԱԿ-ի Սև ցուցակն անփոփոխ չէ: Բոլոր այն գերատեսչությունները, որոնք եռամսյակային Սև ցուցակում հայտնվելուց հետո վերանայում են տեղեկատվության ազատության ոլորտում իրենց գործունեությունը և բարեփոխումներ իրականացնում տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով, այլևս չեն ընդգրկվում տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյաների տարեկան ամփոփ Սև ցուցակում:

Սերգեյ Կապինոս
ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ղեկավար

Ինձ համար մեծ հաճույք է շնորհավորել Ինֆորմացիայի ազատության կենտրոնին իր 10 ամյակի կապակցությամբ: ԻԱԿ-ը՝ որպես Հայաստանում տեղեկատվության ազատության արժեքների նվիրյալ քարոզիչ, առաջնեկի դեր ստանձնեց տեղեկատվություն ստանալու իրավունքը պաշտպանելիս, որն այնքան օգտակար եղավ այլ ժողովրդավարական իրավունքների և ազատությունների հաստատման համար:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը գնահատում է բազում տարիների համագործակցությունը ԻԱԿ-ի հետ բազմաթիվ նախաձեռնությունների շրջանակներում, որոնք ուղղված էին Հայաստանի կառավարական հաստատությունների թափանցիկությունն ու հաշվետու լինելը բարձրացնելուն և տեղեկատվություն ստանալու իրավունքը կիրառող քաղաքացիական հասարակության մոտ «իմացիր-ինչպես» սկզբունքների ամրապնդմանը, որը ժողովրդավարության անկյունաքարերից մեկն է:
Ես ԻԱԿ-ին շարունակական հաջողություն եմ մաղթում իր բոլոր ձեռնարկումներում:

Ֆրանսու Վեզինա
Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի նախկին ղեկավար

Լինելով Հայաստանի ամենաեռանդուն քաղաքացիական հասարակության կազմակերպություններից մեկը՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը առաջատար դեր է խաղացել կոռուպցիայի կանխարգելման և հայտնաբերման գործում՝ բարձրացնելով մեծ ու փոքր պետական կառույցների կողմից տեղեկատվության ազատության սկզբունքների իրագործման պատասխանատվությունը:

Շատերը գիտեն, որ տեղեկատվության ազատությունը թափանցիկ և հաշվետվողական կառավարման նախապայման է, հետևաբար, դժվար է գերագնահատել հայ հասարակության կյանքում ԻԱԿ-ի կատարած դերը: Հզորացնելով համապատասխան կառույցների և պետական ծառայողների կարողությունները, անընդմեջ վերահսկելով տեղեկատվության ազատության սկզբունքների կիրառումը՝ պետական կառավարման մարմինների արդյունավետության մոնիտորինգի իրականացման միջոցով, տարբերակելով բարձր և ցածր արդյունավետություն ցուցաբերող կառույցները, պայքարելով պաշտոնյաների հետ դատարանում և խթանելով քաղաքականության փոփոխությունները՝ ԻԱԿ-ը դառնում է Հայաստանում արդարության և ժողովրդավարության տարածման անփոխարինելի գործընկերը:

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի անձնակազմի անունից ԻԱԿ-ին իր տասնամյակի կապակցությամբ մաղթում եմ անկոտրում ուժ և վճռականություն իրենց նպատակների իրականացման գործում:

Ֆոտոցուցահանդես՝ նվիրված Մամուլի ազատության միջազգային օրվան

2010թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն Մամուլի ազատության համաշխարհային օրը՝ մայիսի 3-ը, նվիրել էր տեղեկատվության ազատությանը: Այդ իսկ նպատակով ԻԱԿ-ը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի և ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության հետ համատեղ 2010թ. մայիսի 3-ին կազմակերպեց ֆոտոցուցահանդես՝ «Մամուլի ազատություն, Տեղեկատվություն ստանալու իրավունք» խորագրով:

Ներկայացվել էին շուրջ երեք հարյուր աշխատանքներ, որոնցից ժյուրին ընտրել էր երեսուն ինքնատիպ լուսանկար: Այս ցուցահանդեսի նպատակն էր արտացոլել խոսքի և տեղեկատվության մատչելիության իրավունքի կիրառման մարտահրավերներն ու հնարավորությունները և կառավարություններին, լրատվամիջոցների ներկայացուցիչներին և հանրությանը հիշեցնել այդ իրավունքի կյանքի կոչման հարցում իրենց ունեցած դերի մասին: Ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ 2010թ. մայիսի 3-ին, որին ներկա էին ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր սեղպան Մարի Յովանովիչը, ԵԱՀԿ դեսպան Սերգեյ Կապինոսը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչևան, ՀՀ գլխավոր դատախազը, Կրթության և գիտության նախարարը, Հայաստանի լրագրողներ, պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Ցուցահանդեսը տևել է մեկ շաբաթ, որի ավարտից հետո լուսանկարները հրապարակվեցին Մամուլի ազատության օրվան նվիրված հատուկ կատալոգում:

“Շնորհակալություն մայրիկ, ես տեղեկացված եմ”.
հեղինակ՝ Գրիգոր Բաբախանյան

“Ես տեղյակ լինելու իրավունք ունեմ”.
հեղինակ՝ Գրիշա Բալասանյան

“Աժ ընտրությունների նախօրեին”.
հեղինակ՝ Անահիտ Հայրապետյան

«Դու տեղյակ ես» հեռուստահաղորդաշար



2009թ.-ից Ինֆորմացիայի ազատության կենտրոնը պատրաստում և եթեր է հեռարձակում «Դու տեղյակ ես» հեռուստահաղորդաշարը, որը նվիրված է մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքին: Հաղորդաշարը ներկայացնում է, թե ինչպես մարդիկ կարող են ՀՀ օրենսդրության համաձայն ստանալ իրենց անհրաժեշտ տեղեկությունները, ուր և ինչպես դիմեն, ինչպես վարվեն, երբ հարցումը մերժվում է և այլն: Եվ ամենակարևորը, ինչպես մարդիկ կարող են տեղեկություն ստանալու իրավունքի միջոցով իրականացնել մյուս իրավունքները՝ սպառողի իրավունքը, աշխատանքի կամ կրթության իրավունքը, սոցիալական ապահովության կամ առողջության իրավունքը և այլն:

Յուրաքանչյուր հաղորդման տևողությունը 30 րոպե է: Հաղորդումներն հեռարձակվում են «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությամբ: Դրանք նաև տեղադրված են Կոնտրոնի ինտերնետային կայքի «Հրապարակումներ» բաժնում. http://www.foi.am/hy/tv-program/

Հրապարակումներ

ԻԱԿ-ի հրապարակած բոլոր գրքերը տեղադրված են Կենտրոնի ինտերնետային կայքի «Հրապարակումներ» բաժնում. http://www.foi.am/hy/books/

> Անցած 10 տարիների ընթացքում ԻԱԿ-ը հրապարակել է տեղեկատվության ազատության վերաբերյալ բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ, վերլուծություններ և գրքեր»:



«ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ» տեղեկագիր

2001թ.-ից մինչ օրս կենտրոնը հրապարակում է «Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը, որը ՏԱ ոլորտի մասին միակ մասնագիտացված պարբերականն է Հայաստանում: Տեղեկագրի յուրաքանչյուր համարում հրապարակվում է այն պաշտոնյաների «Սև ցուցակը», ովքեր ոտնահարել են քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը: ԻԱԿ-ը լայնորեն հրապարակայնացնում է տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները:

Հրապարակումներ

ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱՌԵԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ. Ուղեցույց քաղաքացիների և հասարակական կազմակերպությունների համար, 2005թ.



Ներկայացվող ուղեցույցի հիմնական նպատակն է քաղաքացիներին և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ծանոթացնել տեղեկատվության ազատության հասկացությանը և նշանակությանը, ՏԱ օրենսդրությանը, տեղեկություն ստանալու կարգերին, տեղեկություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկման մեխանիզմներին, իրավական պատասխանատվությանը:

ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱՌԵԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ. Ուղեցույց քաղաքացիական ծառայողների համար, 2005թ.



Այս ուղեցույցն առաջին հերթին ուղղված է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային մասնավոր կազմակերպությունների պաշտոնատար անձանց: Դրա նպատակն է վերջիններիս օգնել իրենց գործունեությունը համապատասխանեցնելու տեղեկատվության ազատության չափանիշներին:

ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱՌԵԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ. Ուղեցույց լրագրողների համար, 2005թ.



Ներկայացվող ուղեցույցը կօգնի լրագրողներին ծանոթացնալու տեղեկատվության ազատության հասկացությանը և նշանակությանը, ՏԱ օրենսդրության ազգային և միջազգային իրավական կարգավորման առանձնահատկություններին, տեղեկություն ստանալու կարգերին, պայմաններին, տեղեկություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկման մեխանիզմներին:

ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱՌԵԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԸ. Ուղեցույց իրավապահ համակարգի ներկայացուցիչների համար, 2005թ.



Ներկայացվող ուղեցույցը իրավապահ համակարգի ներկայացուցիչներին ծանոթացնում է տեղեկատվության ազատության հասկացությանը և նշանակությանը, իրավապահ համակարգում տեղեկատվության ազատության առանձնահատկություններին:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. Ուղեցույց լրագրողների համար, 2007թ.



Ուղեցույցը շատ կարևոր է հատկապես ընտրությունների նախաշեմին, քանի որ այն լրատվամիջոցների ներկայացուցիչներին ծանոթացնում է, թե ինչպես նրանք կարող են օգտագործել տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը ընտրությունների ընթացքում տեղեկատվություն ստանալու նպատակով:

Հրապարակումներ



ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ. Ուսումնասիրություն, 2007թ.

Այս ուսումնասիրման նպատակն է խթանել տեղեկատվության մատչելիությունը ՀՀ ԶԼՄ-ների համար՝ դիտարկելով, թե որքանով արդյունավետ են կարողանում լրագրողներն օգտագործել տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքը և ՏԱ օրենսդրությունն իրենց ամենօրյա աշխատանքում, և որքանով հրապարակային և բաց են աշխատում պետական մարմինները ԶԼՄ-ների համար:

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԼԻՆ. Տեղեկատվության ազատություն, 2008թ.

Մենագրությունում ներկայացված է տեղեկատվության ազատության դերը և նշանակությունը ժողովրդավարական հասարակության ձևավորման գործընթացում: Հեղինակ Շուշան Դոյդոյանն անդրադառնում է տեղեկատվության ազատության իրավական երաշխիքներին, ազգային և միջազգային իրավական կարգավորման առանձնահատկություններին:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ, 2008թ.

Գիրքը նախատեսված է տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինների աշխատակիցների համար: Այն գործնական ուղեցույց է, որը պատասխանում է այն բոլոր հարցերին, որոնք ծագում են տեղեկատվության տրամադրման, սեփական նախաձեռնությամբ տեղեկատվության հրապարակման ժամանակ:

ԻՆՉՊԵՍ ՍՏԱՆԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԱՌՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ, 2008թ.

Ուղեցույցի օգնությամբ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն կունենան ծանոթանալ մարդու իրավունքների կարև որագույն բաղադրիչներից մեկի՝ տեղեկատվության ազատության և հարակից իրավունքների հետ:

ԱՊԱԳԱ ՄԱՅՐԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ, 2008թ.

Ուղեցույցի նպատակն է բարձրացնել կանանց իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկվածության մակարդակը՝ ընտանիքի պլանավորման, հղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում: գիրքը հրապարակվել է 2008 թ.-ին, որից հետո մի շարք օրենսդրական փոփոխություններ են տեղի ունեցել:

Հրապարակումներ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՏԱՆՔ, 2008թ.

Այս գիրքը հասցեագրված է երիտասարդությանը: Այն միտված է բարձրացնելու երիտասարդների իրավունքների և հնարավորությունների մասին իրազեկվածության մակարդակը՝ կրթություն ստանալու, զբաղվածություն ապահովելու և աշխատանքային հարաբերություններում:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ I, 2001-2006



Ժողովածուն ներառում է 2001-2006 թթ. ընթացքում տեղի ունեցած տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանության դատական գործերի բոլոր փաստաթղթերը՝ տեղեկություն ստանալու հարցում, հայցադիմում, վճիռ: Գրքի առաջաբանում ներկայացված է նաև տեղեկատվություն ստանալու դատական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանում:

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ II, 2007-2010

Դատական գործերի ժողովածուում ներկայացված են տեղեկատվության ազատության ոլորտում ՀՀ-ում 2007-2010 թ.թ.-ի ընթացքում տեղի ունեցած և ավարտված դատական գործերը: Ժողովածուն ներառում է նաև տեղեկատվության ազատության դատական պրակտիկայի վերլուծություն:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ. Մեկնաբանություններ, 2011թ.



Գիրքը բաղկացած է երկու հիմնական մասից: Առաջինում ներկայացված են տեղեկատվության ազատության իրավունքի հասկացությունը, սկզբունքները: Իսկ երկրորդ մասը ՏԱ օրենքի հանգամանալից վերլուծությունն է:

ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ. Լուսանկարների ժողովածու, 2010թ.

«Մամուլի ազատություն, Տեղեկատվություն ստանալու իրավունք» խորագրով ֆոտոցուցահանդեսի լուսանկարներն զետեղված են այս կատալոգում: Ինչպես նաև համառոտ ներկայացված են հեղինակների մասին տեղեկություններ:

6. Խորհրդատվություն քաղաքացիներին

ԻԱԿ փորձագետ Մ. Հակոբյանը անցկացնում է ՏԱ ուսուցում

2001-2011թ.թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը քաղաքացիներին ապահովում է տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ խորհրդատվությամբ: Մինչ օրս կենտրոնն ապահովել է խորհրդատվությամբ 6300 քաղաքացու:

Կազմակերպության այս գործունեությունը ներառում է 3 ուղղություն.

- խորհրդատվություն պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման, ինչպես նաև այլ տեղեկատվություն տնօրինողներից տեղեկություն ստանալու հնարավորության և կարգի վերաբերյալ,

- գործնական աջակցություն քաղաքացիներին հարցումներ կազմելու հարցում: Այն դեպքերում, երբ քաղաքացիների ուղարկած հարցումները մնացել են անպատասխան կամ պատասխանը եղել է ոչ լիարժեք, Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իր անունից նույնաբովանդակ հարցում է ուղարկել տվյալ տեղեկատվություն տնօրինողին և քաղաքացու համար ստացել պահանջվող տեղեկությունները,

- դատական գործերի պարտաստում և ներկայացուցչություն դատարանում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հետամուտ է լինում սեփական նախաձեռնությամբ կամ քաղաքացիների համար ուղարկված և անպատասխան մնացած, թերի կամ անհիմն, ոչ ըստ էության պատասխան ստացած հարցումներին՝ փորձելով լրացուցիչ հարցման կամ բանավոր ճշտման միջոցով ստանալ պահանջված տեղեկությունները: Այն դեպքերում, երբ դա չի հաջողվում, ԻԱԿ-ը դիմում է դատարան՝ պահանջված տեղեկությունները ստանալու, ինչպես նաև տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյային վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջներով:

Խորհրդատվությունն իրականացվում է ինտերնետի միջոցով, հեռախոսով և քաղաքացիների կողմից ԻԱԿ գրասենյակ այցելությունների միջոցով:

Նշենք նաև, որ որոշ դեպքերում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը խորհրդատվություն է իրականացնում արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիների համար՝ ՀՀ պետական մարմիններից ստանալով նրանց հետաքրքրող տեղեկությունները:

7. ՏԱ օրենսդրության կիրառման և կառավարման համակարգի հրապարակայնության մոնիտորինգ

2003թ.-ից սկսած՝ ՏԱ օրենքի ընդունումից հետո վեր, ԻԱԿ-ը պարբերաբար իրականացրել է մոնիտորինգներ՝ պարզելու համար տեղեկատվության ազատության վիճակը ՀՀ-ում: Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում տեղեկատվության ազատության իրական վիճակը գնահատելու, պետական մարմիններին բաց և թափանցիկ աշխատելուն պարտավորեցնելու:

ՏԱ առաջին մոնիտորինգը ԻԱԿ-ն իրականացրեց 2003թ.-ին՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից անմիջապես հետո: Հայաստանից բացի այս ծրագրին մասնակցել են նաև Հարավ-Աֆրիկյան հանրապետությունը, Մակեդոնիան, Բուլղարիան և Պերուն: Ծրագրի արդյունքում մշակվեց նշված պետություններում ՏԱ օրենսդրության կիրառման մոնիտորինգի մոդել:

> ԻԱԿ-ը տարեկան 1000-ից ավելի տեղեկություն ստանալու հարցումներ է ուղարկում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ միաժամանակ լինելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն ամենաակտիվ օգտագործող կազմակերպություններից մեկը:

Հաջորդ լայնածավալ մոնիտորինգն իրականացվեց 2004թ.-ին, որի շնորհիվ հնարավորություն եղավ մոնիտորինգին մասնակից 14 այլ երկրների հետ համատեղ պարզել տեղեկատվության ազատության համեմատական պատկերը: Աղյուսակում ներկայացված է ներպետական օրենքներին համապատասխան տեղեկություն տրամադրելու պատկերը: Հայաստանում ՏԱ վիճակը 2004թ ՏԱ մոնիտորինգի արդյունքներով այլ երկրների հետ համեմատությամբ այդ ցուցանիշը կազմում էր 56%:



Հաջորդ մոնիտորինգն ԻԱԿ-ն իրականացրեց 2008թ.-ին՝ նպատակ ունենալով ամփոփել պետական մարմիններից տեղեկատվություն ստանալու լրագրողների փորձը ՏԱ օրենքի ընդունումից հետո, դիտարկել, թե որքանով արդյունավետ են կարողանում լրագրողներն օգտագործել տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքը և ՏԱ մասին օրենսդրությունն իրենց ամենօրյա աշխատանքում, և որքանով հրապարակային և բաց են աշխատում պետական մարմինները ՁԼՄ-ների համար, նաև պարզել լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքին սպառնացող առկա խոչընդոտներն ու հիմնախնդիրները:

2011թ.-ին ԻԱԿ-ն իրականացրեց տեղեկատվության ազատության ոլորտի հաջորդ համապարփակ մոնիտորինգը, որի հիմնական արդյունքները ցույց տվեցին հետևյալ պատկերը.

ԻԱԿ-ի իրականացրած մոնիտորինգների մասին առավել ամբողջական տեղեկատվություն կարելի է ստանալ այստեղից՝ http://www.foi.am/hy/research/:

Մոնիտորինգի արդյունքների ընդհանուր պատկերը



8. Givmeinfo.am նախագիծ

2011թ. ԻԱԿ-ը ստեղծեց www.givemeinfo.am կայքը, որի նպատակն է հանրային վերահսկողություն իրականացնել ՀՀ կառավարման համակարգի նկատմամբ և մշտական մոնիտորինգի միջոցով ներկայացնել կառավարման համակարգի վիճակագրական պատկերը տեղեկատվության ազատության ոլորտում:

Կայքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուրին, ով դիմել է տեղեկատվություն տնօրինող որևէ մարմնի, կայք ներմուծել իր հարցումը, հարցման պատասխանը՝ եթե առկա է, ներկայացնել նկարագրություն: Արդյունքում, քաղաքացիների տեղեկություն ստանալու հարցումները նույնպես ներառվում են վիճակագրության մեջ՝ ներկայացնելով տեղեկատվության ազատության վիճակը Հայաստանում:

Նախագիծն իրականացվել է ԵԱՀԿ Երևանի գրասենյակի և ԱՄՆ ՄԶԳ համաֆինանսավորմամբ:

9. Աջակից կազմակերպություններ

Իր գործունեության 10 տարիների ընթացքում ԻԱԿ-ն իրականացրել է 24 ծրագիր: Մեզ ֆինանսավորող աջակից կազմակերպություններն են՝

1. ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
2. ԵԱՀԿ-ի Երևանի գրասենյակ
3. Եվրասիա հիմնադրամ
4. Բաց հասարակության ինստիտուտ /Բուդապեշտ/
5. Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակ
6. ԱՐՏԻԿԼ 19
7. ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր
8. Ժողովրդավարության Վեսթմինսթերյան Հիմնադրամ (WFD)
9. Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատուն
10. Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատուն
11. Ամերիկյան Իրավաբանների Միություն (ABA CEELI)
12. «Կասալս ենդ Ասոշիեյթս» Ինք

Ընթացիկ ծրագիր

2008-2013թ.թ. ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ ԻԱԿ-ն իրականացնում է «Տեղեկատվության մատչելիությունը համայնքային մասնակցության համար» 5-ամյա ծրագիրը: Ծրագրի հիմնական խնդիրներն են նպաստել մարդկանց մասնակցությանը համայնքային կառավարման և հանրային խնդիրների լուծման գործընթացներին, ինչպես նաև տեղեկատվության մատչելիության արդյունավետությանը նպաստելու միջոցով խթանել բաց և թափանցիկ կառավարման համակարգի ստեղծմանը:

Ծրագրով նախատեսված է իրականացնել հետևյալ գործողությունները.

- Ոչ ֆորմալ ուսումնական կենտրոնի հիմնադրում:
- Տարբեր խմբերի ուսուցում տեղեկատվության ազատության օրենսդրության վերաբերյալ:
- Տեղեկություն ստանալու հարցումներին ընթացք տալու էլեկտրոնային մեխանիզմների ներդրում 3 մարզպետարաններում և 2 քաղաքներում:
- Ռազմավարական դատական գործերի ստեղծում:
- Սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակման մեխանիզմների բարելավում:
- Հասարակության ակտիվության բարձրացում:
- Հանրային քարոզարշավ և դատական նախադեպերի ստեղծում:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 2001-2011

Հասցե/ Address: ք. Երևան 001, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
4-th floor, 1/3 P. Buzand str., Yerevan 001, Armenia
Հեռ./ֆաքս, Tel/fax: 560 360
էլ. փոստ/ e-mail: foi@foi.am
Կայք/Website: www.foi.am